



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՅԵՐԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԸ
 (111) ՅԵՎ (111)
 ՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՇԻԶՄԸ

ՊԵՏՈՎԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԵՎԱՆ—1929



ՏԵ. ՀՐԱՄԱ



Հ/8225

ՊԱՏԵՐԱՋՄԻ ՎՏԱՆԳԸ

ՅԵԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՖԱՇԻԶՄԸ

15-7-98



ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ ՊՐՈՍՈՒՐՈՎ ԿՐԱՆԿԱՐԱԿ

ՕԵՐԵՎԱՆ - 1929

Հրատ. № 1096

ԹԵՏՏՐԱԾԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառել. № 2736(բ) Տիրաժ 3000 Պատ. 1036

Իմպերիալիստական պատերազմի, համաշխարհական պատմության վոճրագործ այս շրջանի, 15-րդ տարեդարձին նոր պատերազմի հարաճուն վատանդը շեշտելիս, յերբեք չի կարելի աչքաթող անել Դաշնակցությունը—մեր որերի ձեակերպված հակեկան ֆաշիզմը։ Յեկայն վոչ միայն նրա համար, վոր այսոր նորից ցուցաբերվի Դաշնակցության բուրժուական հականեղափոխական վողջ գործունելությունը, իմպերիալիզմի շահերին սպասարկելու—պատերազմի ու ավերմունքի նրա վոչ այնքան հեռու անցյալի աննախնթաց սխրագործությունները։

Անշուշտ, բանվորագյուղացիական Խորհրդագին Հայաստանն իր ակտիվ բարանսից յերբեք չի հանելու դաշնակ ջարդաբարների ու պատերազմաներների յերջանկահիշատակ ողբախտին» բոլորովին հակազիքի ստեղծած իր շինարարական խաղաղ

պալմանները։ Դա կա և մնում ե, կազմելով Հայաստանի հեղափոխական բանվորության ու աշխատավոր գյուղացիության ամենահզոր գրավումներից մեկը, սոցիալիստական շինարարության դժվարին աշխատանքում նրանց հաղթանակի նախապայմանը, նրանց ուժի պարծանքը։

Դեռ ավելին։

Կործանվող կապիտալիզմը, նրա մահացման ու փոման շրջանը, չնայած ստարիզացիալին, վոր ավելի յե սրում նրա ներքին հակասություննեռն ու դասակարգային պայքարը—սպառնալից դարձնելով պատերազմի վտանգը, մեծ ուժ յեվ կարողություն ե տալիս պրոլետարիատի ստեղծակը, պատերազմներից ու կռիվներից աղատ պալմաններն այնքան ավելի թանգ, այնքան ավելի գնահատելի յեն նրա համար, ով չտփազանց շատ ե տուժել և կորցրել դրանից։ Ահա թե ինչու պրոլետարիատի հաղթական հեղափոխությունից մեր լայն մասսաների ձեռք բերած նվաճումների մեջ այնքան եյական մաս ե գրավում հարցի ալդ կողմը։

Դժբախտաբար մեր որերի շինարարության դործնական աշխատանքներով կլանված, մենք յերբեմն կարծես, աչքաթող ենք անում և կամ ըստ հարկին չենք արժեքագորում ալդ հանդամանքը։ Մինչդեռ նա հակադական կարեորություն ունի մեր լայն մասսաների հակախմազերիալիստական, հակապատերագմական ուրեմն յեթ հակադաշնակցական տրամադրությունները կազմակերպելու, այն ավելի շեշտակի ու հաստատ դարձնելու Յեվ այդ վճէ իհար և, խաղաղասիրական պացիֆիստական, պատվելիտական նպատակների համար, այլ խաղաղ պայմանները, ստեղծագործ աշխատանքին անհրաժեշտ հանդիսատ վիճակը հերոսաբար ու աննկուն պաշտպանելու պատրաստակամության գիտակցությունը բարձրացնելու, ուժեղացնեհամար։

Պրոլետարական-բայլենվիկյան խաղաղությունն և, վոր մենք պարտավոր ենք իր ամբողջ հասակով վեր հանել, պարզել ու բացատրել ամենին, անկուլտուրական բանվորից սկսած մինչեւ նետին գյուղացին։ Ալդ մենք պիտի անենք վոչ միայն դաշնակների ժո-

զովրդակործան անցյալի «փայլուն» եջերը
թերթելու, պատմական եքսկուրս կատա-
րելու, այլև նրանց այսորվա դեմքը—նոր ըս-
պանդանոցի մեծ ու փոքր կազմակերպիչնե-
րին արած լակեյուրյունը, պատերազմական
հաւետական ակտիվ դերը պարզելու.

Դաշնակցությունը — հայկական բուրժու-
ազիայի մարտական կուսակցությունը, վոր
իմպերիալիստական պատերազմի ամենա-
նշանավոր գործոններից ե յեղել Կովկաս-
յան ճակատում, փաստորեն իր Փաշիստա-
կան մկրտությունն ստացել ե պատերազմի
ու հեղափոխության տարիններին։ Փույթ
չե, վոր կուսակցությունն ինքն իր ղեկա-
վարների ըերնով դրա ձեակերպումը տվել
ե ավելի ուշ։ 14 թվի իմպերիալիստական
պատերազմը, նրա նախապատրաստությու-
նը նորից ուժ ե տալիս «Հայկական հար-
ցին», քանիուրորդ անգամ հրապարակ
հանում ավելի հզոր նվաճողների ճաշակին
հարմարեցրած հայ բուրժուազիալի ձկ-
տութները։ Դաշնակցությունը գործի յէ
անցնում ռուսական ու Անտանի իմպերիա-
լիստական ֆրոնտին զինվորագրված հայ

բուրժուազիալի պատմական իղձն իրագործելու Պատերազմի լարերը հնչեցնող կենուրոնական ուժերի համեմատությամբ չնշին եր հայ բուրժուազիայի ուժն ու զորությունը։ Սակայն, Փոքրասիական ֆրոնտում, իմալերիալիստական գիշատիչների բաղիսման այդ թատերաբեմում նա ի վիճակիցիր իրեն հայտնաբերելուն և նայ բարձուազախայի ու նրա կուսակցության միանգամայն գիտակցված յիշ ինքնունակաչ դիրքությունը։

Փոքր Ասիային տիրապետելու ռուսկերմանական սուր հակամարտությունը ծայր եր առել զեռնս տարիներ առաջ։

«Ի՞նչ տեղի կունենա, — զրում եր պատերազմն սկսելուց մեկ տարի անց գերմանական հայտնի հրապարակախոսներից մեկը, — յեթե դաշնակիցներն իրար մեջ բաժանեն, մի կողմից, Բոսֆորի ու Պարսից ծոցի և, մյուս կողմից՝ Սուեզի ջրանցքի և Արարատի միջև ընկած տերրիտորիան...։ Դերմանիայի ապագան Արեվելքումն ե, Փոքր Ասիայում, այնտեղ, ուր անցնում ե Բաղդադի գիծը, գտնվում ե աշխարհի ամենահարուս

նավրի աղբյուրներից մեկը, պղինձ, մետաղ-
ներ, հաց, քամբակ, արտավայրեր»:

Այդամ եր մտածում գերմանական նշա-
նավոր հրապարակախոսը, ձևակերպելով
գերմանական մարտնչող իմպերիալիզմի
դեպի մերձավոր Արևելքն ունեցած նվաճո-
ղական հակումները:

Տրամադրութեն հակառակ կերպով ելին
դնում հարցը ոռւսական իմպերիալիզմի
ներկայացուցիչները: Նույնիսկ Արևմուտ-
քում, ավստրո-գերմանական ճակատում
ոռւսական զորքի տարած հաղթության
պահին, ոռւսական իմպերիալիզմի ներկա-
յացուցիչները գրում ելին. «Ռուսաստանի
գլխավոր շահերն ընկած են նախ և առաջ
մերձավոր Արևելքում, Հայաստանում, Մի-
ջագետքում, Բոսֆորի ու Դարդանելի մոտ:

Միլլուկովը, վոր պարզորոշ կերպով
հիմնավորում եր ոռւսական իմպերիալիզմի
նվաճողական-աշխարհակալական տենդենց-
ները, պատերազմի նախորյակին, 12 թվի
գեկտեմբերի 13-ին Պետական Դումայի
նիստում հայտարարում ե, վոր «Հայերի ող-
բուրյունը Վանի տօջափում յեվ հարեվան տե-

դերում մեզ համար չի կարող անօրքեր ալիսել այդ տեղերը կարեվոր են տնտեսապես, վարպես սպառման ռուկաներ յեվ սրատեգիոնան տեսակետից»։

Պետական Դումայում տրտասանած իր ալդ նշանավոր ճառում, Միլյուկովը վի ստորեն առարկում եր Գերմանիային և իր նետերն ուղղում նրա դիվանագետներին։ ԶԵ վոր Գերմանիայի հայտնի գրող Ռոբերտ Շունդեր նույնպես պատերազմի նախորյակին հետեւյալն եր ասել.

«Վողջ Փոքր Ասիակի վերաբերյալ չի կարելի ավելի սպառնական դրություն յերեակայելի քան այն, վոր կունենա Ռուսաստանը, իր ձեռքում կենտրոնացնելով Անդրկովկասը, Հյուսիսային Պարսկաստանը և Հայասպանը»։

Ռուսական և գերմանական իմպերիալիստների ականավոր ներկայացուցիչների ալս տարբեր կարծիքները բավականին պարզ լույս են սփոռում իրերի իսկական դրության վրա և Փոքր Ասիան՝ «գլխավոր շահերի ալդ վայրը» նվաճելու համար ըստեղծված կովկասյան ճակատի Փոնը գծա-

գրում: Նրանք միաժամանակ պարզում են գերմանական և ռուսական իմպերիալիզմի նման դիրքավորման «քաղաքական նկատառութիւնները», վեր հանելով նրանց իսկական անշղարշ ձգտութիւնները:

Քաղաքակրթությունը, մարդասիրությունն ու բարեգործությունը, մանր ժողովուրդներին փրկելու ֆրազները մի կողմը թողնելով, մենք զործ կունենանք շատ հասարակ յեկ պարզ բաների հետ, նաև, պրոդյինձ, մետադ, հաց, բամբակ ոպառման ռուկա, արոտատեղ յեկ վերջապես սրատեզիական վայր: Իրականում «կոպիտ» կերպով թե Միլլուկովը և թե Ռուբախին այդ պարզ բաների մասին և վոր խոսել են, այդպիսին շատ ստանալու հարցն ե, վոր դրել են:

3.

Ցեթե «Речь»-ը ուստական իմպերիալիզմի նվաճողական ձգտութիւններն արդարացնելու և նրա ոգտին հասարակական նպաստավոր կարծիք ստեղծելու համար, գրում եր, վոր «Թյուրքիան իրենից կաղմակերպված ավաղակապետությունն ե ներկայաց-

նում, վորպիսին պիտի բաժանել, ապա
դաշնակցության տրիբուն «Հորիզոնը» պա-
տերազմի առթիվ դրում եր. «Թուսական
մեծ պետությունը չի հրաժարվել Արևելքի
մորթվող ժողովուրդներին պաշտպանելու
սրբազն ավանդություններից»։ Իսկ Նի-
կոլ Աղքայանը՝ ոռւս զենքի ջատագովս ու
Դաշնակցության դիպլոմատը՝ 15 թվի փես
տրվարին Թիֆլիսի ազգային համազումա-
րում հայտարարում ե, վոր «Ազգային բլու-
րովի ձեռնարկը՝ կազմել հայ կամավոր խըմ-
քեր և նրանցով աջակցել ոռւս զենքի հա-
ջողության ու հայ ժողովուրդը պաշտպա-
նել—այդ ձեռնարկը չեր կարող համազգա-
յին, հավանության ու համակրանքի հանդի-
պել, յեթե ստեղծված չլիներ մի նպաստա-
վոր մթնոլորտ», այսինքն՝ յեթե ցարական
իշխանությունը հատուկ ուշադրություն
շղարձներ և ոժանդակություն ցույց չտար։

Այդ նույն կամավորական խմբերի գերը
շեշտելով, ժամանակի վոչ անհայտ հրապա-
րակախոսներից մեկը գրում եր. «Թույլը
կարող ե աջակցել հզորին՝ անպայման հա-
մակերպվելով նրա պահանջներին և ընթա-

նալով նրա ցույց տված ճանապարհով և
վոչ հակառակը։ Այս տողերում՝ ավելի
քան պարզորոշ տրված ե հայ բուր-
ժուազիայի վոչ միայն ուժն ու զորությունը,
այլև նրա բռնած դիրքը հանդեսի իմպերիա-
լիստական մեծ ուժերը։ Պատերազմական
տրամադրությունն ու մտախնությունը,
կապված ռազզը փրկելու ձգտումներին,
այնտեղ ե հասնում, այն աստիճան վարա-
կիչ մթնոլորտ ստեղծում, վոր նույնիսկ
գտնվում են մարդիկ, վորոնք ալսպիսի տո-
ղեր են զրում։ Կարելի յե ջարդել թուր-
քին, քշել մինչև Պոլիս և նույնիսկ Պոլիսը
դրավել։

Ինչպես տեսնում ենք դեպի Արեելք ար-
շավող ոռւսական իմպերիալիզմի, նրա նշա-
նավոր ներկայացուցիչ Միլյուկովի բերա-
նով ե խոսում այդ տողերում հայ բուր-
ժուազիայի հրապարակախոսը։ Զե՞ վոր Պոլ-
սի և Դարդանելի գրավումը, դա՝ ոռւսական
իմպերիալիզմի ծրագիրն եր, վորի սայլին
եր լծվել նաև հայ բուրժուազիան, իր կոն-
կրետ սպասելիքները համակերպելով մեծ
ուժի հաղթանակին և այդ հաղթանակի հա-

մար թնդանոթի միս դարձնելով Հայաստանի աշխատավորությունը Ռուսական իմպերիալիզմի ու հայկական նացիոնալիզմի հիմնական ռենդենցն արտահայտող արդ տողերը պատկանում են Գրիգոր Զալիսուշյանին, վորը մինչ այդ հայ կապիտալիստի և մեծատան զովքը լերգելով եր զրադված։ Իսկ Բագվի դաշնակցական «Արևը», գրում եր, վոր «Պիտի կառուցենք մեր ազատ պատմությունը», քանի զեռ Տաճկահայաստանում «մի հատիկ լերթիկ ե ծխում» և «հայ լեզու հնչում ե թեկուղ մեկի բերանից»։

Հարձակվող դրսի մեծ ուժի՝ ռուսական իմպերիալիզմի համար միանգամայն նպաստավոր ու դիմավորիչ հասարակական կարծիք եր ստեղծում բանաստեղծը, լերք սպառման շուկաների նվաճման համար նրա մղած պայքարին «ազատարար» բնույթ եր տալիս.

Ու ամպերում բարձր ուսից Մասիսի
Ալանում ե մեծ արծիվը Հյուսիսի՝
Շիտակ դեպի բարձրունքները հայկական
Եր լեռնվից հայի բաղդն ու ապագան,

Ժամանակակից մամուլի և գրականու-

թլան ալս վորակավորութները, առանձին
հրապարակախոսների ու քաղաքական գոր-
ծիչների հայտարարությունները «հղորին
աջակցելու և համակերպվելու» մասին վոչ
թե հաստարակական տիրող խավերի մոլո-
լորության ու չհասկանալու մասին են խո-
սում, այլ եւետակիորեն ընդգծում երանց զի-
տակից գերը, բռնած զործի արժեքավորումը
ունեցած կոնկրետ սպասելիքները, այդպիսիք
ստանալու համար մղած պայքարը:

Մենք մի կողմ ենք թողնում ալստեղ
այն խնդիրը, թե Անտանտի պարագլուխ-
ները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանն
իրենց հերթին ինչ սլլաններ ունեյին: Հե-
րիք ե այստեղ հիշատակել միայն այն փաստը,
վոր նրանք 16 թվի գարնանը Լոնդոնում,
ըստ եյության արդեն վորոշել եյին Փոքը
Ասիայի և Հայտաստանի «անկախության բաղ-
դը»: Զենք խոսում նաև այն մասին, թե
միջաղային ու ոռոսական իսպերիալիզմի
դիվանագիտական դեմքերն ինչպես ելին
ըմբռնում իրենց դիվանագիտական խաղերի
և պրիլութների համար գնդակ գարձրած այս-
պես կոչված, հայկական հարցը:

Այդ բոլորը կա և այսոր դժվար չե դատապարտել և պախարակել այդ ամենը, թթու և կծու խոսքեր ուղղել իմպերիալիզմի հասցեյին: Այդպես ենք ասում, վորովհետեւ իրենք իմպերիալիստուկան պատերազմի ամենավոճրագործ ջոկատ դաշնակցականները, նույնպես յերբեմն դեմ չեն «հայհոյելու» իմպերիալիզմին, իրենց «խարողին»:

Վոչ սիայն անթույլատրելի, այլև միանգամայն մասսակար գործ ե, յերբ մարդիկ վեր են կենում և մեր որերում, 1929 թվին իրենց մեծահատոր աշխատություններում այն միտքը զարգացնում, թե ոդասնակները չիասկացան, վոր պատերազմը տարվում և վոչ թե ձնշված ժողովուրդներին ազատագրելու, այլ աշխարհի բաժանման և ժողովուրդների հարստահարման համար: Դասեկարգի ու նրա մարտական կուսակցության մասին սխալ և միամիտ գաղափար պիտի ունենալ նման «գոհարներ» արտադրելու: Բատակարգի ըմբռնման, խնդիրը լուծվում է շատ հեշտ կերպով. դաշնակները չիասկացան, սխալ վեցին ու խարվեցին, թեև ուզում եյին ժողովրդին աղատագրել: Հերիք և մի քիչ

ավելի լուրջ մոտեցում ունենալ և հարցը
քննել իր ամբողջ ծանրությամբ, նման մո-
տեցման վողջ իմաստն արժեքավորելու հա-
մար։ Դա վոչ այլ ինչ և, քան յեթե դաշ-
նակների, հայ բուրժուազիալի ռեակցիոն,
հականեղափոխական գերի արդարացումը,
վոչ թե նրա ըստ եյության ու հիմնովին
Ժխուումն, այլ քննադատումը, ուղղումը. մի
բան, վոր իրենք դաշնակները ևս զեմ չեն
անելու։ Զե՞ վոր խնդիրը վոչ թե չհասկա-
նալու մեջ և, այլ կուսակցության հետա-
պընդած նպատակների, գործունեյության
մեջ։

Մեզ համար, պըոլետարիատի աշխատա-
վորական հոծ դանդվածների համար, հսկա-
յական կարևորություն ունի այդ հարցը,
քանի վոր յերբեմն պըոլետարիատի գործի
բարեկամ մարդիկ ևս հակում են ցույց
տալիս «ինքնաքննադատությամբ» մոտե-
նալու Դաշնակցության գործունեյությանը։

Առանց այլևայլության, առանց մի վորեն
վերապահումի, պարզ եւ վորու պատերազմի
միջոցին Դաշնակցության խաղացած իմպե-
րիալիստական—բուրժուական դերը, վորի հա-

մար նա վոչնչի առաջ կտնի չի առել, հա-
մաժողովրդական ու ազգային հանրածա-
նոթ լարլիկներով ջարդաբար քաղաքակա-
նություն տարել:

8225

Ցարիզմի հետ ձեռք-ձեռքի ու նրա հո-
վանու տակ, իրենց դիծը տանելու. խոսք
ելին տալիս հայ բուրժուազիան և նրա կու-
սակցությունը, լերը «Հորիզոնի» եջերից
դիմում ելին Նիկոլա 2-ին, նրա Անդրկով-
կաս ժամանելու առթիվ «...Այս ծանր որե-
րին, լերը հայ ժողովուրդն իր նվիրական
ու պատմական իզմերի իրագործումը կա-
պում է Ռուսաստանի հետ՝ հզոր Ռուսաս-
տանի կայսրի ալյու հայաշատ վայրերը՝
միայն բերկրանքով ու ցնծությամբ կարող
ել լցնել հայ ժողովրդի սիրտը»։ Դաշնակ-
ցության 14 թ. իմակերիալիստական պատե-
րազմի զրջանի գործունեյությունը լեզել ե-
միանգամայն դիտակցված ու ինքնաճանաչ
իմակերիալիստական-միապետական, ունակ-
ցիոն հականեղափոխական։

Պատերազմից դեռ շատ առաջ ձեսկերպ-
ված, ուռւսական ֆինանսական կապիտալի-
իմակերիալիզմի ակտիվ գործերն ել յեղել Դաշ-



նակցությունը, նրա տված ծրագրերին հարմարեցրել ու համակերպել և իր միտումները։ Փուլթ չե, վոր պատերազմի մեծ դերակատարների համեմատությունը խղճուկ և յեղել նրա ուժն ու զորությունը։ Սակայն պատերազմն իր խնդիրներով, իմակերիալիստների նվաճողական ձգտումներով առաջարեղ և քաշել Դաշնակցությունը, նրան ևս «գերակատար» դարձրել։ Ու նա իր դերը կատարել և մինչև վերջը։

4.

Մենք այսակղ չենք խոսելու դաշնակցական պետականության շրջանի կոփիթուրի ու պատերազմների մասին, քանի վոր գրանք ըստ եյության յեղել են անցյալ քաղաքականության շարունակությունը։ Զե՞ վոր հայ բուրժուազիայի պետականությունն առանց իմակերիալիզմի, նրա ուժի, չեր կարող ապրել։ Իսկ իմակերիալիզմը, նրա հետ միասին հայ բուրժուազիան, Յերեանցան նահանգի «Անկախ Հայաստանով» չեցին կարող բավականանալ։ Բզուր չե, վոր հայ բուրժուազիայի հետևողական իդեոլոգները

միշտ ել դեմ են յեղել այդ «Ճեր» ու մասշտաբից անկախության: Դաշնակցական Հայուստանն իմպերիալիզմի նվաճողական քաղաքականության համար միայն ստրատեգիական ոլունկա կարող եր լինել և փաստորեն այդպիսին ել յեղել եւ Պիտի հիշատեկել միայն, վոր խրոնիկական բնույթի ըստացած արտաքին պատերազմներին զուգորդում եյին ներքին կռիվներն ու ջարդերն «սրբելու» քաղաքականությունը:

5.

Սակայն, պետությունից զրկվելով և քանվորագլուղացիական մասսաների կամքով լերկրից վռնդվելով, նրանք հետազայում ավելի ուժեղ թափով գործի լեն լըծվում իմպերիալիզմի հականեղափոխական ֆրոնտում: Խորհրդային Հայուստանի ու սլրութանարական հեղափոխության դեմ ամենակատիվ պայքար մղելով, նրանք միաժամանակ փարիսեցիական բառերի շուայլումով, թող են փչում դաղութահայ բանվորական-աշխատավորական մասսաների աշքին:

Հետագայում Խորհրդավին Միության ու
Խորհրդային Հայաստանի գեմ իմպերիա-
լիստական բուրժուազիայի ողափին իղեա-
կան զորահավաք կատարելով, նրանք շատ-
տակտիկորեն են հարցին մոտենում։ Բոլոր
ուժերի լարումով սկսում են ուժեղ կերպով
աշխատանք կատարել բազմեկիների ու Խոր-
հրդային իշխանության վարկաբեկման հա-
մար, խորամանկություն բանեցնելով և բա-
ցահայտ կերպով պատերազմի հարցը չշո-
շափելով, նրանք աստիճանաբար իրենց
գրավոր չելույթներում մոտենում են դրան։

Միապետական, ցարական անցյալի վողջ
որիենտացիային հավատարիմ, նրանք մի-
ապետական սե հարցուրակալին գեներալ-
ների հակախորհրդային ծրագրներին վոչ
միայն հավանություն են տալիս, այլ և
այդպիսիք իրենց ուժեղ պաշտպանության
տակ առնում, Անդրկովկասյան հականեղա-
փոխության հետ լեզու գտնելու քայլերի
դիմում, Մուսսոլինիի նտալիան—ֆաշիզմը
փառաբանում, նրանից որինակ վերցնելու
քարոզ կարդում։ 24—25 թ. թ. կուսակցու-
թյունն իր թերթերի բերնով բացահայտու-

ըեն հայտարարություններ և անում ֆաշիստական կուրսի մասին:

«Ազետարեր ողիտի ըլլա մեզի համար — պրում եր դաշնակցական «Հայքենիքը» 25 թվին, յեթե ոռւս միապետական, կամ ֆաշիստական շարժման հանդեպ՝ ստորագնահատելիքնք անոր քաղաքական արժեքը՝ ուժն ու կարողությունը»։ Մի ալ առիթով ֆաշիստական իտալիակինվաճողական ձգտումների մասին խոսելով, նույն թերթն ասում էր. «Մեզ հայերիս համար, մասնավորապես իտալիո այս հարածուն զորացումը մեծ, թերես կենսական օանեկանուրյուն կներկացնե, վորովհետեւ մեծ իտալիան կոչված և բաղդորոշ գործոն մը դառնալու մերձավոր Արևելքին մեջ և այնպիսի ուղղությամբ մը, վոր միանգամայն կհամապատասխանի հայ ժողովրդի շահերուն ու քաղաքական ձգտումներուն»։

Դաշնակցությունը հիացումով արտահայտվելով ֆաշիստական իտալիակի մասին, միաժամանակ «հայ ժողովրդի», այսինքն հայ բուրժուազիայի կոնկրետ սպասելիքները կապում ե ֆաշիզմի աշխարհակալական

քաղաքականության հետ։ Թաշիզմի և դաշնակցության բարեկամական հարաբերություններն այն տատիճան են դարգանում, վոր դաշնակցության ջոջերը հատուկ հանձնարարություններով կապեր են ստեղծում իտալական ֆաշիզմի ներկայացուցիչների հետ։ Զարդարարին հատուկ ուժեղ թափով նրանք հականեղափոխական—ռեակցիոն աշխատանքներ են կատարում ֆրանսիական իմպերիալիզմի դիրքերում՝ Սիրիայում, պալքարելով հեղափոխական զրուզների ղեմ։ Իմպերիալիզմի հետ ընդդեմ հեղափոխության, ընդդեմ իմպերիալիզմի հիմքերը տատանող աղբային—ազատագրական շարժման—ահա դաշնակցականների իրական կուրսը, նրանց գործնեյության իսկական բովանդականությունը։

Սակայն նրանք միայն դրանով չեն ուղղում բավականանալ և աշխատանքի ռավելի լայն հորիզոններ են» գծում։ Անշուշտաչքաթող չանելով նաև յերկիրը։

Հենց այդ զբջանում ե, վոր իմպերիալիստական բուրժուազիան իր արբանյակներով սկսում ե անհանգստության առա-

յին նշանները ցույց տալ, Խորհրդագին Իշխանության վերասերման վրա իր դրած հուկսերը չիրագործելու առթիվ։ Պրոլետարական դիկտատուրայի լերկրի խաղաղ ու անարյուն վերասերումը, տնտեսական շինարարության դժվարին խնդիրների առաջ վերջնականապես կապիտուլացիա անելը, ահա թե ինչ եր սպասում անհամբեր միջազգային իմպերիալիզմը։ Դրանում նիստավային կելով, կապիտալիստական բուրժուազիան մեզ վրա տկչիլ հարձակում նախապատրաստելու միջոցերին և դիմում։ Յեվ այստեղ դաշնակցուրյունը նորից ձեռնամուխ և լինում իր փորձված դերի կատարմանը։

Մուս միապետականների և իտալական ֆաշիստների հետ գրկախառնվելուց հետո, նա հերթով իր ձեռքը մեկնում և իմպերիալիզմի թմրուկի տակ պար լեկող չին-հեղափոխական բանվորների ու գյուղացիների դահիճներին—Զանդ-Ցո-Լիններին և Զանկալ-Շիններին։ «Հայրենիքը» նախ և առաջ գովեստի խոսք և ասում իմպերիալիստական սիստեմի հիմքերը տատանող չինական մեծ հեղափոխության դահիճների պարա-

գլուխ անզլիական պահպանողականներին.
 «Դանդաղ, բայց հաստատուն քայլերով
 անզլիական դիվանագիտությունը, զարմա-
 նալի հմտությամբ առաջ կքշե Հեռավոր Ա-
 րևելքի վրա, Խորհրդային Միությանը վճռա-
 կան ճակատամարտ մը տալու ծրագիրը,
 վորը միշտ ավելի կհասունանա ահեղ թա-
 փով մը»: «Մոսկովյան բոլլեիղմի» վտանգը
 Զինաստանի մեջ հայտարերելուց հետո,
 դաշնակցական խմբագիրն այն գարձյալ
 կապում ե իր դասակարգի ու կուսակցու-
 թյան սպասումների հետ: «Զինաստանի ի-
 րադարձությունները, վորոնք կարող են
 բաղկորոշ անդրադարձում մը ունենալ նաև
 հայ ժողովրդի վիճակին վրա, կենդանի ու
 հրատապ նետքերություն կներկայացնե նաև
 մեզ—հայերիս համար»: Բոլոր դեպքերումն
 ել դաշնակցականներն իրենց միշտ կա-
 պում են իմակերիալիստական—միլիտարիս-
 տական ռեակցիոն ուժերի հետ և նրանց
 հակախորհրդային հաղթանակների շվաքի
 տակ հեռանկարներ վորոնում ու կոնկրետ
 սպասելիքների ծրագրեր հյուսում: Բայլշեիղ-
 մի ու Խորհրդային Խշանության դեմ զուրու

պալով, համաշխարհային և անգլիական իմպերիալիզմի թիկունքում ակտիվանալով, դաշնակցականներն միաժամանակ այնպես ելին ձեացնում ու ձեացնում են, վորիբենք վոչ մի կառ և առնչություն չունեն իմպերիալիստների կողմից նյութվող նոր սպանդանոցի հետ: Նրանք դեռ այսօր ել շարունակում են աջ ու ձախ հոլովել վորիբենք չեն մասնակցում, սակայն բնորոշն այն է, վոր և չեն մասնակցելու հակախորհրդային պատերազմական ֆրոնտին, ոյլ հենց այնպես—նստելու և սպասելու յեն նրա կործանմանը:

Այդ տեսակետից չափազանց հետաքըրքը քրական և դաշնակցական վերջին 11-րդ համագումարը: Նրանց վերջին տարիների քաղաքականության հատկանիշը կազմող տակտիկական այդ մանցովը համագումարի բանաձեռների մեջ անհրաժեշտ տեղ եղած է դտել:

Խոսելով այն մասին, վոր Մոսկվան քաղաքական ու անտեսական «ամեն չարիք ու թշնամություն կընե հայ ժողովրդին», մի բան, վոր դաշնակցականների կարծիքով նույնիսկ դերազանցում ե ցարական Ռու-

սաստանին, նրանք ասում են. «Հայ ժողովրդի քաղաքական-տնտեսական և խմացական ազատագրության առաջին պայմանն ե Խորհրդակին կարգերու վերացումը Բուսաստունի մեջ»:

Ի՞նչպես ասացինք, խորամանկ մանյովը բանեցնելով, խորհրդային կարգերի վերացման աննրածետուրյունը շետելով, նրանք միաժամանակ դեմ են արտահայտվում այդ վերացման արտաքին ու բռնի միջոցներին. «Ճերժել վորեե աջակցություն դրսի ոտար ուժերուն, վոր կծկտեն խորհրդակին կարգերի բռնի վերացման»: Զենք խոսում այն մասին, վոր դաշնակցական մտքի զլուխ գործոց վորոշումներն իրարամերժ հասկացողություններ են: Ի՞նչպես կտրելի լի սփողովրդի փրկության համար խորհրդային կարգերի վերացում պահանջել և միաժամանակ ակտիվ չաշխատել այդ ուղղությամբ նպատակին հասնելու:

Սակայն դա չե կարեռը: Եւականն ու հիմնականն այլ բան ե: Զե՞ վոր դաշնակցականները ևս անկախ ժամանակից ու տարածությունից չեն գործում: Ճիշտ ե, նրանք

այսոր ունեն 15 թվի փորձը, պիտին նրա «լավ ու վատ կողմերը», բայց այդ փորձը նրանց մի բան ել ե ասում, վոր վճռական նշանակություն ունի վոչ միայն կուսակցության ախորվա աշխատանքի հաջողության տեսակետից, այլև ընդհանրապես նրա գուլիք հեռանկարների:

Վարն ե այն մասսան, վորին նրանք զորահավաքի պիտի յենթարկեն իմալերիալիզմի համար, նրան ազահով թիկունք սըտեղծելու գործը կազմակերպեն և միաժամանակ պատերազմին անհրաժեշտ մարդիկ տրամադրեն։ Այդ մասսան—գաղութային բանվորությունն ու արհեստավորությունն ե, գաղթականության հոծ զանգվածները, վորոնց վորոշ մասը կապիտալիստական աշխարհում անխուսափելի պրոլետարտկանացման պրոցեսս ե ապրում։ Ահա այն մասսան, վոր իմալերիալիստական առաջին պատերազմից 15 տարի անց, կապիտալիստական աշխարհի տառապանքի բովով անցած, Խորհրդավին Միության ու Խորհրդադավին Հայաստանի ստեղծագործական խաղաղ աշխատանքներին այսպես թե այնպես

տեղյակ, այսոր կարող են նյութ տալ դաշ-
նակցության պատերազմական ռեզերվին:

Յեկ ամբողջ խնդիրն ել հենց այն է,
վոր այդ մասսային նետ չե վոտֆի հանել պա-
տերազմի համար, նրա մեջ պատերազմական
տրամադրությունները հրահրել: Յերբեք
չպիտի մոռանալ, վոր դաշնակցությունն
իմպերիալիստական հականեղափոխական
թալանիչ իր գեմքը բացահայտ կերպով
մերկացրել ե 1914 թվի պատերազմի միջո-
ցին: Այդ իմաստով նա արդտեղ հսկայա-
կան հարված ե ստացել, իսկ պատերազմից
չափազանց շատ տուժել ե հայ աշխատավո-
րությունը: Ահա թե ինչու այդ վերջինը ա-
նեծքով ու նողկանքով ե վերհիշում համաշ-
խարհային պատմության այդ վոճրագործ
շրջանը, զզվանք տածում գեպի նրա մեծ ու
փոքր հեղինակները:

Պատերազմին վարկաբեկված դաշնակցու-
րյունը, մահացու հարված ստանալով Նոյեմ-
բերյան Հեղափոխության ակտով, նետագայում
գնալով հայբայնան ու կազմակու ծման ո ծեղ
ուղան ե անցել: Դեռ այսոր ել գաղութնե-
րում և մեզ մոտ նա իր համար թե՛ հենա-

րան և թե՛ ռեղերվի ուժ ունի, սակայն
այդ այն չե, ինչ վոր անցյալում։ Դաշնակ-
ցության բալանսն այսոր պասսիվ և գնա-
լով մեղկանում եւ

Ահա այս պայմաններում նրա նամար
դժվար եւ ու տակտիկական խոռորագույն սխալ
բացահայտ կերպով պատերազմի մասին խո-
սել, նրանում իր խաղալիք դերը վեր նանել,
մանավանդ, վոր մեր աշխատավորական մաս-
սաների, գրտեց բվում յեկ գաղութահայ
զանգվածների նակադաշնակցական տրամա-
դրությունը, դաստկարգային ատելությունը դե-
պի դաշնակցությունը զգալի չափով խարս-
խվում է հենց նակապատերազմական գծով,
խաղաղ սեղծագործական աշխատանիքի — Խոր-
հրդային Հայաստանի նամար պայֆարելու գծով։

Կարևորագույն այդ հանգամանքն եւ ահա,
վոր անխուսափելի կերպով ստիպված ե
հաշվի առնել Դաշնակցությունը և իր՝ պա-
տերազմի ու բռնի ուժ գործադրելու դեմ
լինելու խոսքերով լայն մասսաներին մո-
լորեցնելու աշխատանք կատարել։ Տակտի-
կական այդ մանյովին իր ամբողջությամբ
ավելի վորոշ եւ դրսեորդում, լեթե նկատի

առնենք, վոր դաշնակցական նույն համագումարը վորոշել և գնահատել «ամեն ճշմարիտ շինարարություն» և նույնիսկ «աջակցել Հայաստանի վերաշինության մեծ զորքին»:

Ինչպես տեսնում ենք, դաշնակցական համագումարի միքանի կետերն առաջին հայցքից կարծես թե շատ հեռու յեն գնում և թերեւ կարող են վորոշ միամիտների ուղեղներում վտանգավոր իլյուզիաներ ստեղծել: Սակայն այդ բոլորը միայն դատարկ խոսքեր են. միամիտ ուղեղներ վորսալու խորամանկ միջոց: Ինչպես անցյալի դաւնակցական «սոցիալիզմը», այնպես ել նրանց այս վերջին նամազումարի «խաղաղ» վորումները միայն մի կետ նպատակ ունեն. նորից ու նորից խաբել լայն մասսաներին, իրենց Խորհրդային Հայաստանի յեկ պրոլետարիան նեղափակության վախերիմ քննամիներ ու պատերազմի ակտիվ մասնակիցներ ցույց չտալ: Ահա այդ ե դաշնակցական խոսքը, վոր ինչպես միշտ, այսոր յեւս բնակ կազ չունի նրանց խկական գործի ներ: Ինչ խոսք, վոր մեզ համար կարեսը դաշնակցական գործն

և, վորն անվերապահորեն առում ե, վոր
ռողիբքը» յեռ ու զեսի մեջ են, տենդորեն
պատրաստվող նոր սպանդանոցի դիրքերում։
Երանց իմպերիալիստական պատերազմական
աշխատանին այնքան ակտիվ ու առկարա յե,
վոր այդ տրամադրությունները հակառակ կեղծ
խոսերի յել խաղաղասեր Ֆրագուլգիայի,
անխուսափելնորեն զգալ են տալիս իրենց։
Սիալ կիմներ բացասել և չտեսնել դաշնա-
կցական ֆրազոլոգիան, նրանց մանուկքր-
ները, խոսքի իմաստը։ Այդ բոլորը զոյու-
թյուն ունի և դաշնակցակցությունն ամե-
նամեծ չափերով ոգտվում է նրանցից, իր
ավանտյուրիստական գործունելության հա-
մար ճանապարհ հարթելու, կողմնակիցնե-
րից ու զինակիցներից չզրկվելու, հետեւղ-
ներին պահելու և վերջապես լայն մասսա-
ներին նորից ու նորից խարելու։ Խաղա-
ղասեր ձևանալով, այդ կերպ մասսաների
մոտ իր հեղինակությունն պահպանելով,
դաշնակցությունը միաժամանակ ամենակ-
տիվ աշխատանիք և կատարում պատերազմի
համար։

Զե վոր դաշնակցական հենց նույն 11-րդ

համագումարը վորոշել է. «Ընդհանուր ժողովը միաձայնությամբ հանդեցավ այն յեզրակացության, թե վերջանալու մոտ պիտի նկատել վերակազմության և ուժերի ամփոփման շրջանը և պետք է ծամանակը հասած հումարել աշխուժացնելու պայքարը արտաքին նակատներու վրա»:

Պարզ է, թե վոր արտաքին ճակատի մասին ե խոսքը: Արտաքին ճակատը—դա Խորհրդային Միությունը և Խորհրդային Հայաստանն են, վորոնց գեմ իմալերիալիզմի պատերազմական զիրքերում դաշնակցականները գործի լին անցնում: Յերբեք չպետք է մոռանալ, վոր այդ ե պահանջում թե գաղաղած իմալերիալիզմը և թե իրենց իրական կուրսի ասինանական պրոպագանդան: ՉԻ, վոր «Թեթև» բամբաստնքն որվա փեշակ է, այն ել ցածր վարձատրություններով: Յեվ «ակտիվացած» տղերքը հրապարակ են գալիս:

Տեսեք թե ի՞նչ ե դրում «Հայրենիքում» վոչ անհայտ Ալ. Խատիսյանը—յերջանկահիշատակ շրջանի—Թիֆլիսի հայ բուրժուազիայի «մտավորականը» և Վարանցով Դաշկովի հավատարիմ լակելը.

«Այս տարվա աղգերի դաշնակցության
ընդհանուր ժողովն առանձին հետաքրքրու-
թյուն առաջ չբերեց, առորյա վոչ մի կարե-
վոր խնդիր չկար որակարգում, բացի խաղա-
ղուրյան խնդրից»:

Թաշխացած Խտախոյանը խաղաղու-
թյունն անկարեսոր և համարում, այն ել՝
նրա քննությունն Աղգերի Լիգայի կոմե-
դիական նիստում։ Ավելի կոնկրետացնելով
իր միտքը, նա ասում է. «Խաղաղությու-
նից մենք ոգուտ չունենք, չփակենք աչք-
ներս, բայց և չհուսահատվենք, մենք պետք
են պատրաստ լինենք ազգովին ու հոգեպես։
Ժողովուրդները տասնյակ տարիներով զորք
են պահում, մեկ անգամ կովելու համար,
նույնը վիճակված ե և մեզ, մեր աղգային
հարկադրանքն ե այդ այսոր»։

Անա դաշնակցական վոչ թե խսեր, Ֆրա-
գը, այլ իրական գործը, պատերազմական ֆա-
շիստական դիրքը։

Հայկական բուրժուազիան և նրա կու-
սակցությունը «խաղաղությունից վոչինչ
չսպասելով» և իրենց անցյալ գործունեյու-
թյան վողջ պրակտիկային, մասնավորապես

14 թվի իմպերիալիստական պատերազմի գործելակերպին հավատարիմ, մեծ ուժերի ընդհանուր ֆոնի վրա վտանգ են ներկայացնում խաղաղության համար։ Հեղափոխության ընդհանուր ֆրոնտով, իմպերիալիզմի ու պատերազմի դեմ ուղղված մեր համատարած պայքարը լեռքեք աչքաթող չպիտի անի և թերագնահատի արդ լերենուց թը։ Մասսաներին հակաիմպերիալիստական, հակապատերազմական, սոցիալիզմի շինուրարության համար անվեհեր պայքարելու վոգով գաստիարակելու գործում եյական նշանակություն ունի հակադաշնակցական պրոլագանդը, նրանց պատերազմական, ֆաշիստական դեմքի մերկացումը։

6.

Դաշնակցության ֆաշիստական-պատերազմական դիրքը, դրանից բղխող նրա նըպատակներն ու ծրագրերը մի ավելորդ անգամ մերկացվում են Զին-Արևելյան յերկաթուղու վերջին գեղքերով։ Խորհրդավին Միության դեմ իմպերիալիստների ու չինացի միլիտարիստների կողմից կազմա-

կերպված ավազակային հարձակումը վոտ-
քի հանեց համալն աշխարհի պրոլետարա-
կան-աշխատավորական մասսաներին։ Դա-
սակարգային պալքարը, կապիտալիզմի
ներհակությունները սրող ստարլիդացիան,
պատերազմի միջոցով շուկաների խնդիրը
լուծելու մարմաջն իր կոնկրետ արտահայ-
տությունը գտավ իմպերիալիստների ու
չինական գեներալների այդ արարքում։ Յե-
թե համաշխարհային պրոլետարիատն ու
աշխատավոր մարդկությունն իրենց ան-
հողղող կամքը հայոնեցին հերոսաբար
պաշտպանելու Խորհրդային Միությունը,
միջազգային պրոլետարիատի հայրենիքը,
ապա ռեակցիայի ու հակահեղափոխության
բանակը ևս ձեռնարկեց տկտիվորեն իր դիր-
քերի ամբողջական զորահավաքին։

Իմպերիալիստական բուրժուազիային բա-
յահայտորեն գաշնակցած միջազգային մեն-
շերմը, գերմանական սոցիալ-ֆաշիզմի ըե-
րանով արդարացրեց ու պաշտպանեց չին
հեղափոխական բանվորների ու գյուղացի-
ների դահիճ, հակահեղափոխական գենե-
րալների ավազակային հարձակումը։ Իմպե-

րիտիստական բուրժուազիալի հալտնի դորւծակատարին ձայնակցեցին հականեղափոխությանը զինվորագրված տրոցկիստները և պրոլետարիատի հեղափոխական պայքարի լիկվիդատորները — գերմանական կոմկուսի շարքերից վտարված յերեկվա տջերը։

Հայկական հականեղափոխականությունը, Փաշիզմի լողարանում մկրտված Դաշնակցության միջոցսվ նորից բարձրացրեց իր ձայնը։ Դաշնակցական մամուլն առիթ չի բաց բողնում իր նրբվանքը հայտնելու հակախորհրդային, հականեղափոխական պատերազմի առթիվ։

Դաշնակցական «Հայրենքի» համարները չափազանց հետաքրքրական են այդ տեսակետից։ «Նոր լույսի տակ» նրանք մերկացնում են հայ Փաշիստների իրական միտումները։ Պատերազմի խնդիրը դաշնակցության համար ստացել է արտակարգ բաղակական կարեվորություն։ Պատմության յերկաթե որենքների լոգիկայով դեպի կործանում ընթացող մեռնող դասակարգը — բուրժուազիան, ներկա դեպքում հայ բուրժուազիան ավանտյուրաների մեջ և վորոնում

իր փրկությունը։ Նա պինդ կառչել ե պատելազմի գաղափարին և անհամբեր սպասում ե նրա շուտ պայթելուն։ Մակայն բացահայտ ու աշկարա նա այդ չե անում։

Ի՞նչ արած, չե վոր վողջ բուրժուական աշխարհը փարիսեցիական կեղծավորությամբ նախապատրաստում ե այդ գործը։ Ազգերի կիզայի, խաղաղասիրական բազմաթիվ կեղծ կոնֆերենցիաների միջոցով, սոցիալ-ռեֆորմիզմի լի ու լի աջակցությամբ նա պատրաստվում ե պատերազմի, սակայն չի դադարում խաղաղության գովքն անել և անգամ պրոլետարիատի պետությանը պատերազմ հրահրելու, նվաճողական քաղաքականության մեջ մեղադրել։ Բուրժուազիան այնքան ասուկում պրոլետարական աշխատավորական մասսաներից, նրանց ուժերից, վոր իրեն խաղաղության կեղծ կողմանակից ձևացնելով, լայն մասսաների աչքին թող փչելով ե մի նոր համաշխարհային սպանդանոց պատրաստում։

Բնավ տարորինակ ու զարմանալի չե, վոր ճիշտ նույն ձևով են դնում հարցը նաև դաշնակցականները, մեր որերի կազմակերպ-

ված հալ Փաշիստները, Վոր պատերազմը դաշնակցության համար դառել ե բացառիկ նօանակություն ունեցող մի յերեվուլք, առաջարգ կարեվություն ստացել, այդ լեռնում նաև և նրանից, վոր «Հայրենիքի» վերջին համարներն ամբողջ որերով անընդհատ զրադարձել են Զին-Արևելյան յերկաթուղու, նրա հետ սերտորեն կապված անցքերի լուսաբանությամբ։

Դաշնակցական խմբագիրը գրությունն այնպես ե ներկայացնում, վոր իրը թե յերկաթուղու վրա կատարված հարձակման, հարաբերությունների խզման և պատերազմական մթնոլորտ ստեղծելու պատճառը Խորհրդային Միությունն ե։ Նա դրում է.

«Մոսկվա հանկարծ կիսզե հարաբերությունները Զինաստանի հետ և կնե շարք մը այնպիսի գրգռիչ քայլեր, վարօնիք ուղղակի դեպի պատերազմ կտանին... Ով ե վոր պիտի կարենա ժխտել Զինաստանի ինքնապաշտպանության իրավունքն իր իսկ սահմաններուն վրա։ Այնպես վոր յերե պատերազմն իրապես սկսի, հարձակվող կողմը պիտի ըլա Կարմիր բանակը»։

Ինչես տեսնում ենք դաշնակցական ռխա-
ղաղասեր» խմբագիրը Զին-Արևելյան յեր-
կաթուղու լարված զրության վողջ հան-
ցանքը քցում ե Խորհրդակին Միության
վրա, խոսելով նրա «նախահարձակողակա-
նի» մասին և իմպերիալիստական բուրժու-
ագիայի կամքով ու նրա հովանու տակ պար
յեկող չին միլիոնարխուների զիրքն «ինք-
նապաշտպանություն» համարելով:

Ինչ վերաբերում ե դաշնակցական ինք-
նապաշտպանությանը, ապա մենք դրա ի-
մաստն ու արժեքը շատ լավ գիտենք, դա
հանրածանոթ ե բոլորին: Ինքնապաշտպա-
նություն-ցարիզմի և իմպերիալիզմի զիր-
քերում, հայ բուրժուազիալի պատմական
իրավունքն ու իղձերն իրազործելու, ան-
պահման հարմարվելով հզոր տիրողների պա-
հանջին ու ճաշակին:

Անշուշտ դրան իր ելությամբ մոտ ե չի-
նական բուրժուազիայի ինքնապաշտպա-
նությունը, վորի ոգտին այսոր այնքան լե-
ռանդով թմբկահարում ե դաշնակցական
մամուլը: Ինքնապաշտպանություն, վոր
ուղղված ե աշխարհի միակ բանվորական

պետության, սոցիալիզմի մարտական կառուցման դեմ։ Ինքնապաշտպանությունը վոր ուղղված է չին բանվորների և գյուղացիների դեմ, հոգուտ իմպերիալիզմի, չին հականեղափոխական գեներալների, չին հեղափոխական բանվորների ու գյուղացիների դահիճների ոգտին։ Անա թե վորն ե յեվ ինչ արժեք ունի դաշնակցական ֆաշիստական ու չին միլիտարիստական ինքնապատանուրյունը։

Իմպերիալիստական բուրժուազիային խաղաղության ջերմ կողմնակիցներ ու պաշտպաններ դուրս բերելով, դաշնակցական խմբագիրը գրում ե. «Բոլշևիկները շատ լավ գիտեն, վոր վորքան ավելի կամրանա միջազգային խաղաղությունը, այնքան ավելի կամրանան դրամատիրական կարգերն աշխարհի մեջ, այնքան ավելի կնվազեն, կչքանան համաշխարհային հեղափոխության հնարավորությունները»։

Ավելորդ ե այստեղ զբաղվել նրանով, վոր դաշնակ խմբագրին ցուց տալ, թե խաղաղությունն ու կապիտալիզմը դրանք միանգամայն անհարիր լերեւութներ են, վոր

դրանցից մեկը ժխտում ե մյոււսին։ Իդեալ
լավ գիտե նա, բայց ել վճր որվա բուր-
ժուական հրապարակախոսն ե, վոր չապա-
ցուցի, թե խաղաղությունն ու կապիտա-
լիզմը համատեղելի յեն, վոր «խաղաղու-
թյունն ամրացնում ե կապիտալիզմ»։

Բայց միայն դրա մասին չի խոսում դաշ-
նակցական խմբագիրը։ Ըստ նրա, դուքս ե
գալիս, վոր պատերազմների հետաձգումով
կամ վերացումով չքանում են համաշխար-
հային հեղափոխության հեռանկարները։
Այդպիսով նա յեզրակացնում ե, վոր ըստ
բայլշենիկյան թեորիայի պրոլետարական հե-
ղափոխությունը կարող ե առաջանալ միայն
պատերազմից, ուստի բայլշենիկներն ել այն-
քան շատ կողմնակից են պատերազմին։

Ինչպես տեսնում ենք, դաշնակցական
հրապարակախոսը բավականին ճարպիկո-
րեն ե հյուսել իր կոնցեպցիան։ Նա բայլ-
շենիկներին պատերազմի վոչ միայն կողմնա-
կից ե դուքս բերում, այլ ասում թե նրանք,
բայլշենիկներն որ ու ցերեկ անհամբեր սպա-
սում են պատերազմի, քանի վոր միայն
այդ գնով կարող ե հաղթանակել պրոլետա-

րական հեղափոխությունը։ Իմիջի այլոց
նկատենք, վոր դաշնակցական անալիգի ալու
սգլուխգործոցը՝ իր մեջ որդինալ վոչինչ չի
պարունակում, նա նույնությամբ «թոցրած
ե» սոցիալ-դեմոկրատիայից, վորի գուշա-
կություններով զբաղվող տեսաբանները
զրում են, վոր իրը թե ըստ կենինի ուս-
մունքի հեղափոխությունը կարող ե առա-
ջանալ միայն պատերազմից։ Դրանով նը-
րանք փորձում են մի ձեռքով յերկու ձմե-
րուկ բռնել. բայլշեիկները շատ են ուզում
պատերազմ, վորպիսզի հեղափոխությունը
հաղթի կամ վոր յեթե պատերազմ չկա, ու-
րեմն հեղափոխություն ել չի լինի։

Բայլշեիկներին պատերազմի հետ կապե-
լով, նրա յերկրպագուներ հայտարարելով
«Հայրենիքը» խոսում ե այն մասին, վոր
դրամատիրական յերկրները, բուրժուական
պետությունները — Ամերիկան, Անգլիան և
Ֆրանսիան «անկեղծությամբ ու վճռակա-
նությամբ կաշխատեն իւաղաղ ճանապար-
հով մը հարթել Մանչուրիո մեջ ստեղծված
դժվարությունները»։

Հավատարիմ հիշյալ դրութին, դաշնակ-

ցությունը հանդես և գալիս վորպես ջերմ ովաշտպան Շոտար պետությունների միջամտության», այսինքն իրականում պայքարում նրան ինտերվենցիոն ծրագրերի իրադրժման համար:

Զափազանց հետաքրքրական և, վոր այս հարցում ևս դաշնակցությունը չի մոռացել իր վաղեմի բարեկամներին ու այսորվազինակիցներին—չինական ռեակցիայի և հականեղափոխության դիրքերում գործող ռուս սպիտակ գվարդիականներին։ Դաշնակցական խմբագիրը մեծ հաճուքքով հիշատակում և նաև նրանց ծառայությունը։

Իրենց լիակատար հավանությունը տալով իմպերիալիստական պետությունների հակախորհրդային հականեղափոխական միտումներին, հայ Փաշիստները լեզրակացնում են «դրամատիրական աշխարհը ձեռքերը ծալած չպիտի նստի և լավ, թերես վերջին դասը պիտի տա միջազգային անուղղելի խառնակիչներուն, վորոնք այնքան հանցավոր համառությամբ կկատարեն իրենց քանդիչ գործը»։

Ինչպիս տեսնում ենք, դաշնակցությունը

ձեռնարկել ե ամենաակտիվ կերպով պատերազմի բացահայտ պրոպագանդի։ Իմպերիալիզմի ակտիվ քայլերը՝ հակախորհրդային պատերազմ նախապատրաստելու պահանջում ե նույնպես ակտիվ, ավելի բարձր հիման վրա տարվող աշխատանք։

Ահա տերերին անհրաժեշտ այդ ակտիվ կուրսից յելնելով ե, վոր նրանք փառաբանում են պատերազմն ուղղված Խորհրդային Միության դեմ, իրենց անմիջական անելիքները կապում նրա հետ։ ԶԵ վոր չինխորհրդային կոնֆլիկտը «դժվար պիտի ըլասահմանափակել Հեռավոր Արեվելքին մեջ»։

Ահա թե վո՞րտեղ ե թաղված շան գլուխն իրականում։ Ահա թե վորոնք են դաշնակավանտյուրիստների կոնկրետ սպասելիքները։

Զին-Արևելյան յերկաթուղու դեպքերը միայն մի ավելորդ անգամ նշում են դասակարգային պայքարի սրման հետևանքով ակտիվացող համախորհրդային ռեակցիայի բոլոր մեծ ու վոքր ուժերի համատարած մոքիլիզացիան։ Զին միլիտարիստներին ձեռք բռնող հայ ֆաշիստներն առիթ բաց


չեն թողնում իրենց իմպերիալիստական-պատերազմական հավատարմությունն ապացուցելու, խաղաղության ու Խորհրդացին իշխանության դեմ ակտիվ պարփառ տանելու:

Միության և Անդրկովկասի բանվորների և գլուղացիների հետ միասին, սոցիալիստական շինարարության ու խաղաղության համար և սպատերազմի դեմ պարփարելով, Խորհրդականի աշխատավորական լայն մասսաները յերբեք աչքարող չեն անելու իրենց ամենավոխերիմ քենամուն—Դաշնակցությանը: Նրանք զայրուէթով ու նողկանքով են վերհիշում Դաշնակցության բուժուական հականեղափոխական վողջ գործունելությունը, իմպերիալիզմի շահերին սպասարկելու, պատերազմի, թալանի ու ավերմունքի սխրագործությունները: Յեկմեր լայն մասսաների, բանվորադյուցացիական Խորհրդականի հակաիմպերիալիստական հեղափոխական որիենտացիան ստանում ե սոցիալիստական ընդհանուր մեծ գործի իր կոնկրետ բովանդակությունը: Խաղաղ, ստեղծագործ աշխատանքի ար-

դյունքը վալելած մեր բանվորն ու գյուղացին յերբեք չպիտի մոռանան վերոհիշյալը։ Նրանք պարզորոշ ու լավ պիտի իմանան, վոր յեթե ներկայումս գիշատիչների ձեռքով վտանգված ե միջաղգային կացությունը, ապա դրանում իրենց կեղտու մատնեն խառնել նաև դաշնակցականները։

Դեմ դուրս գալով միջաղգային թալանչի գիշատիչներին, նրանք միաժամանակ դեմ են դուրս գալիս անցյալում իրենց շահագործող ու թալանող ավանտյուրիստներին, նրանց ֆաշիստական այսորվա միտումներին։ Ամեն կերպ պաշտպանելով խաղաղ ստեղծագործ աշխատանքը, հաստատ կամքով դեմ լինելով զոռով մեր վզին փաթաթվող պատերազմին, մեր բանվորն ու գյուղացին նորից պատրաստակամություն են հայտնում կուրծք դեմ տալու հանուն սոցիալիստական հայրենիքի, հանուն միջաղգային հեղափոխության, ընդդեմ հակահեղափոխության, ընդդեմ նրա հայ կամակատարների։ Միջաղգային ու հեղափոխական պարտականությունների կուտարման իրենց այս դիրքերում, նոր պատերազմ սնուցող

իմպերիալիզմի դեմ պալքարելով, հեղափոխության ընդհանուր ֆրոնտով նրան ջախջախիչ հարվածներ տալով, Խորհրդային Հայաստանի բանվորներն ու գյուղացիները կոխկոտելով կանցնեն միջազգային հակահեղափոխության հայ Փաշիստների վրալով:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045538

[154.]

А 1
877

ԳՐԱԸ 10 ԿՈՂ. (մ.) 1¹/₂ մ.



Е ГРАНТ

Опасность войны и ар-
мянский фашизм

Госиздат ССР Армении
Эревань 1929